

ԵՐԵՎԱՆԻ Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՎՈՐԻՉ ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑՈՒ ՕԾՄԱՆ ՍՐԲԱԶԱՆ ԱՐԱՐՈՂՈՒԹՅՈՒՆԸ

Քրիստոնեությունը Հայաստանում պետական կրոն հռչակման 1700-ամյակին նվիրված գլխավոր հանդիսություններից էր Երևանի Ս. Գրիգոր Լուսավորիչ Մայր եկեղեցու օծումը, որ կատարվեց բազում ուխտավորների ներկայությամբ և առանձնակի շուքով:

Մեկտեղման 23-ին, առավոտյան ժամը 10.00-ին, առաջին անգամ դողանջեցին Երևանի Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցու զանգակատան զանգերը՝ ազդարարելով հոյակերպ այս տաճարի օծումը և անդրանիկ Պատարագը: Պատարագիչն էր ազգիս Վեհափառ Հայրապետը:

Եկեղեցական, թափօրը, գլխավորությամբ Վեհափառ Հայրապետի, արևմտյան դռնից շարժվեց դեպի խորան, որտեղ և, հընթացս Ս. Պատարագի, տեղի ունեցավ օծման սրբազան արարողությունը:

Օծման արարողության իրենց մասնակցությունն էին բերել Հայաստանի ժամանած քույր եկեղեցիների հոգևոր առաջնորդներն ու պատվիրակությունները, հավատարմագրված դիվանագետներ, սփյուռքահայ մի շարք ճանաչված հասարակական գործիչներ, մշակութականներ, բարերարներ և ուխտավոր հավատացյալների բազմությունը:

Հանդիսությանը մասնակցեցին նաև ՏՏ նախագահ Ռոբերտ Քոչարյանը, ՏՏ վարչապետ Անդրանիկ Մարգարյանը, ԱԺ նախագահ Արմեն Խաչատրյանը, ԼՂՀ նախագահ Արկադի Դուկասյանը, պաշտոնապար այլ անձինք: Հրավիրյալների թվում էր նաև աշխարհահռչակ երգիչ Շառլ Ազնավուրը:


Մանավորո հովհաննես Չևքիջյանի ղեկավարությամբ Պետական ակադեմիական երգչախմբի հոգեպարար կատարումները, անվանի երգեհոնահար Պերճ Ժամկոչյանի նվագակցության զմայլեցուցիչ հնչյուններով համեմված, հիացրել էին ամենքին:

«Կենդանարար Աստուած» շարականի երգեցողության ժամանակ Գերաշնորհ Ս. Հովհան արքեպս. Տերտերյանը հանդիսավոր կերպով Ս. Սեղան է բարձրացնում Սրբալույս Մյուռոնը և տալիս Վեհափառ Հայրապետին:

Սկսվում է օծման արարողությունը:

Վեհափառ Հայրապետն օծում է Ս. Սեղանի գագաթն ու ճակատային մասը, Ամենապատիվ Ս. Թորգոմ Պատրիարքը՝ Ս. Սեղանի աջ անկյունը, Ամենապատիվ Ս. Մեսրոպ Պատրիարքը՝ ձախ անկյունը, Ս. Տիրայր արքեպս. Մարտիրոսյանը՝ Ս. Մարթնոսի սյունը, Ս. Գարեգին արքեպս. Բեգյանը՝ Ս. Մարկոսի սյունը, Ս. Նավասարդ եպս. Կոնյանը՝ Ս. Լուկասի սյունը, Ս. Առաքել եպս. Քարամյանը՝ Ս. Հովհաննեսի սյունը:

«Խորան սրբութեան» շարականից հետո օծվեցին եկեղեցու սյուները, դռները և մկրտության ավազանը: Ս. Տաթև արքեպս. Լարիբյանն օծում է Ս. Պետրոս առաքյալի սյունը, Ս. Գրիգորիս արքեպս. Բունիաթյանը՝ Ս. Անդրեաս առաքյալի սյունը,



ԵՐԵՎԱՆԻ Ս. ԳՐԻԳՈՐԼՆԻՍԻԱՆԻ ԼՈՒԻՍՈՒՄՈՒՄԵՆ ԵՄԵՐԻՏԱՆԻ ՕՏԱՄԱՆ ՔԱՏԱՐԱՆԻ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿԱԿԱՆԱՅԻՆ ԵՊԱՐԽԻ
ՍԱՆԱՏԱՐԱՆԻ ԿԱՆՈՆԱԿԱՆ
ԿԱՐԴԻՆԱԿԱՆ ԿԱՆՈՆԱԿԱՆ

Տ. Նավասարդ եպս. Կճոյանը՝ հյուսիսային դուռը, Գիսակ արքեպս. Մուրադյանը՝ Ս. Փիլիպոս առաքյալի սյունը, Տ. Սուրեն արքեպս. Գաթարոյանը՝ Ս. Բարդուղիմէոս առաքյալի սյունը, Տ. Գարեգին արքեպս. Բեգջյանը՝ Ս. Սիմեոն Քանանացու սյունը, Տ. Նաթան եպս. Հովհաննիսյանը՝ Ավագ դուռը, Տ. Վաչե արքեպս. Հովսեփյանը՝ Ս. Մաքարիա առաքյալի սյունը, Տ. Նորվան արքեպս. Զաքարյանը՝ Ս. Թադեոս առաքյալի սյունը, Տ. Մեսրոպ արքեպս. Գրիգորյանը՝ Ալփյան Հակոբոս առաքյալի սյունը, Տ. Խաժակ արքեպս. Պարսամյանը՝ Ս. Թովմաս առաքյալի սյունը, Տ. Պարզև արքեպս. Մարտիրոսյանը՝ Հարավային դուռը, Տ. Առաքել եպս. Քարամյանը՝ Զերեդյան Հակոբոս առաքյալի սյունը, և Տ. Փառնե եպս. Ավետիսյանը՝ Ս. Պողոս առաքյալի սյունը:

Այնուհետև Տ. Շահն արքեպս. Աճեմյանը օծում է Մկրտության ավագանը, իսկ «Աստուած բարձրեալ» հոգևորիս աղոթքից հետո՝ խաչով ու զավագանով օրհնում եկեղեցին և «Ս. Գրիգոր Լուսավորիչ» անվամբ կնքում կորած Մայր փաճարը:

Այս ամենից հետո Վեհափառ Հայրապետը ընթերցում է «Տէր Աստուած մեր» փակման աղոթքը՝ խնդրելով Ամենակալ Տիրոջից օրհնել Ս. Եկեղեցին, «գի մաւրոցեայն ի սա յանաւարաւ տաւաւորաց փոխնացի յանապական և պաւրոսկան Մարմին և Արին Միածնի Զո Յիսուսի Զրիարոսի: Եւ շնորհեա զնոյն, որոց մարանն ի տաճարս և խոտորովանին զմեղս խրեանց լինել քաւորին մեղաց և առողջութիւն հոգւոյ և մարմնոյ քարեխօսութեամբ Սուրբ Աստուածածնի և ամենայն սրբոց»:

Օծման սրբազան արարողության վերջում Ամենայն Հայոց Հայրապետը հանդիսութեանը ներկա հավաքացյալներին և ողջ ժողովրդին ուղղեց իր հայրական պարզամը (տե՛ս էջ 20):

Այնուհետև իր պարզամը փակեց Համայն Ռուսիո Պապրիարք, Նորին Սրբություն Ալեքսի Բ-ն.

Ձերդ Սրբություն.

Այսօր Հայ Առաքելական Եկեղեցու կյանքում իրապես մեծ օր է, քանզի այսօր կատարվեց օծումը կոր տաճարի, որը կրում է Հայ Եկեղեցու մեծ սրբի, ևսահարակ Գրիգորի, Հայաստանի լուսավորչի անունը: Այս ուրախալի և լուսավոր իրադարձությունն արժանաբար պատկանում է Հայաստանում քրիստոնեությունը պետական կրոն հռչակման 1700-ամյակին և իրիմի արժանապատիվությունները:

Օծված այս տաճարը միայն արվեստի գործ չէ. կրա գեղեցկությունն ավելի կարևոր նպատակի է ծառայում՝ լինել խորհրդանշող Հայ Եկեղեցու, հայ ժողովրդի և հայկական պետության հոգևոր վերածննդի: Մահմանականության, արգելքների և Եկեղեցու դեմ հալածանքների քաղում տարիներից հետո Հայաստանի պետականության վերականգնման տասնամյակը նշանավորվում է տաճարի կառուցմամբ և օծմամբ: Տաճար՝ ընծայված

Ս. Գրիգոր Լուսավորչին, ով իր արդար գործերով սկզբնավորեց Հայաստանի՝ իբրև քրիստոնյա երկրի 17-դարյա գոյության երկար ուղին:

Այս իրադարձությունը վառ արտահայտությունն է Եկեղեցու և պետության միջև ավանդական կապերի վերականգնման և ամրապնդման, որոնց միությունը հաստատվել է 1700 տարի առաջ:

Քրիստոնեական պարմության բազում դարերը դյուրասահ չէին Հայաստանի բազմաթիվ ժողովրդի կյանքում: Հայրենիքի պաշտպանության համար մղված արյունահեղ մարտերն արտաքին թշնամիների դեմ, որոնք ձգվում էին ոչնչացնել հայոց պետությունը, պահանջում էին ուժերի կենտրոնացում, արիություն, զոհողություն և հոգևոր անկոմունություն: Ավելի քան մեկ միլիոն հայ զոհվեց 1915 թ. ցեղասպանության հերթական փուլում: Հայ ժողովուրդը և Հայ Եկեղեցին վերապրեցին՝ ամրապնդվելով աղոթքով և ի Տեղ սպասվելությամբ: Եվ այսօր այս սբանչևի տաճարը խոսանում է՝ խորհրդանշելով հաղթությունը քրիստոնեական հույսի՝ առ Աստծո անսպառ օգնությունը, որը ծանրագույն փորձությունների ժամանակ հասնում է Իր հավատարիմ հերոսորդներին: Այս տաճարը հիշեցումն է նաև այն բոլոր տառապանքների, որ կրել է բարեպաշտ հայ ժողովուրդը քրիստոնեական իր պարմության դարերի ընթացքում:

Այսօր, ներկա գրնվելով Մայր եկեղեցու հանդիսավոր օծմանը, մենք հիշում ենք սաղմոսեզոսի խոսքերը. «Սրացանք ողորմությունդ, Աստված, Զո ժողովրդի մեջ: Ինչպես որ անունդ է, այնպես և օրհնությունդ է ողջ տիեզերքում, և Զո Աջը լի է արդարությամբ» (Սաղմ. ԽԷ 10): Այս սուրբ տաճարի կառուցումն ու օծումը մղում են մեզ գոհաբանական աղոթք վերադառնալու Արարչին Իր անպարտում բարեգործությունների համար՝ կարարված հապկապես վերջին տարիներին: Մենք վստահ ենք, որ գոհաբանական աղոթքը չի դադարի նոր օծված տաճարի կամարների ներքո:

Քրիստոնեական համայնքի կյանքում տաճարը համախմբող գործոն է. «Արդարև, կենդանի Աստծո տաճար եք դուք, ինչպես ասաց Աստված. «Պիտի բնակվեն նրանց մեջ ու պիտի ընթանան նրանց միջով և նրանց Աստվածը պիտի լինեն, և նրանք պիտի լինեն իմ ժողովուրդը» (Բ Կորնթ. Զ 16): Քրիստոնեությունը հավաքականության իր իդեալով բաժանումներից բայբայով հասարակությանը մատուցում է տաճար-ժողովարանի խորհրդանշով արտահայտվող ներդաշնակ միության պարկերը: Մենք հավատում ենք, որ քրիստոնեությունը Հայաստանում պետական կրոն հռչակման 1700-ամյակի տոնախմբությունը, նոր տաճարի օծմանն առնչվող տոնակատարությունները նորոգյալ պետականության կերպման գործում պիտի նպաստեն հայ ժողովրդի համախմբմանը:

Հավաքական միության իդեալը ներշնչում է մեր Եկեղեցիներին միմյանց հանդեպ հանդես բերելու փոխադարձ ձգվում: Մեր Եկեղեցիների ավանդական բարեկամությունն ամուր հիմք է Հայաստանի և Ռուսաստանի եղ-

բայրական ժողովուրդների միության ամրապնդման համար: Այդ իմաստով մեր ներկայությունը Հայ Առաքելական Եկեղեցու նոր տաճարի օծմանը տեսանկյնի ապացույցն է և երաշխիքը մեր Եկեղեցիների ու ժողովուրդների հետագա մերձեցման:

Ձերդ Սրբություն. մեկ տարի առաջ Դուք Հայ Առաքելական Եկեղեցու ներկայացուցչական պարավիթակությամբ կիսեցիք վերականգնված Ս. Ամենափրկիչ տաճարի օծման մեր հոգևոր բերկրանքը: Այժմ Ռուս Ուղղափառ Եկեղեցու պարավիթակությունն է իր հերթին ներկա Հայ Եկեղեցու մեծագույն տոնահամբությանը: Մայրաքաղաքների մեր երկու տաճարները թեպետև տարբերվում են արտաքուստ, սակայն խորին նմանություն ունեն: Դրանք խորհրդանշել են հոգևոր վերածննդի, որ ապրում են այսօր մեր ժողովուրդները: Պետականության ամրապնդման խորհրդանշել են, որ ձրգրում են հաստատվել բարոյական ամուր սկզբունքների և ազգային ավանդույթների վրա, նշանն են քրիստոնեության կենսապարզ գոյության:

Մեր միության սբանչևի վկայությունը դարձավ այն խաչքարը՝ Սուրբ Խաչը, որ Ձերդ Սրբությունն ընծայեց Ս. Ամենափրկիչ տաճարին անցյալ տարի, և որն օծման օրը կանգնեցվեց տաճարի առջև:

Ռուս Ուղղափառ Եկեղեցու և իմ անունից վերադին սրտանց շնորհավորում եմ Ձերդ Սրբությանը Ս. Գրիգոր Լուսավորիչ տաճարի օծման նշանակալի իրադարձության առիթով և աղոթքով մաղթում Ձերդ Սրբությանը, Հայ Առաքելական Եկեղեցու հավատարմոր գավակներին և ամբողջ հայ ժողովրդին Աստուծո շնորհառատ օրհնություններ:

Ալեքսի Պապրիաբը Ս. Գրիգոր Լուսավորիչ Մայր եկեղեցուն նվիրեց մի շքեղ ոսկյա կանթեղ՝ ի նշան երկու Եկեղեցիների դարերից եկող ջերմ եղբայրական կապերի:

Մայր եկեղեցու հուշաքարի օրհնության արարողությունը կատարվել էր 11 տարի առաջ՝ ձեռամբ երջանկահիշարակ Վազգեն Ա Կաթողիկոսի, իսկ հիմնօրհները՝ 1997 թ. Գարեգին Ա Կաթողիկոսի: Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսին էր, սակայն, վիճակված ավարտին հասցնելու իր նախորդների սրբազան մրախղացումը:

Մայր եկեղեցին կառուցված է հայկական եկեղեցիներին բնորոշ ճարտարապետական հորինվածքով՝ Անիին մոտ գտնվող քարհանքից բերված այն սպիտակ փուֆով, որով և կառուցվել է Բագրավորունյաց մայրաքաղաքի Մայր տաճարը:

Պեպք է նշել, որ Էջմիածնի Ս. Գայանե վանքից այսպեղ՝ Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցի է տեղափոխվել Միածնի Իջման Ս. Սեդանի կաթողիկեն, որի ներքո գտնվել են Նեապոլի Ս. Գրիգոր Լուսավորիչ Հայ վանքից բերված Ս. Գրիգոր Լուսավորչի մասունքները:

Այս հրաշալի կոթողի հեղինակն է ճարտարապետ Սյունիան Զյուրբեյանը, որը շինության մեջ պահպանել է Հայ Եկեղեցուն հարիր բոլոր մանրամասները:

Տաճարի կառուցմանն աջակցելու իրենց պատրաստակամությունը հայտնեցին և կյուրական մեծ միջոցներ նվիրաբերեցին Լուիզ Սիմոն-Մանուկյանը և Ռիչարդ Մանուկյանը՝ ի հիշարարկ իրենց հոր՝ ազգային մեծ բարերար Ալեք Մանուկյանի, ՏԲԸՄ-ի ղեկավարներից՝ ազգային բարերար Նազար Նազարյանը, ազգային բարերարներ Կեր և Գիկին Վաչե և Թամար Մանուկյանները և այլք։

Ս. Պապարազից հետո, ժամը 15.00-ին, Վեհափառ Հայրապետի հրավերով Կարեն Դեմիրճյանի անվան մարզահամերգային համալիրում Կրեդի ունեցավ ընդունելություն-հանդիսություն, որտեղ իր հայրական պարգամը Կրեդի Ամենայն Հայոց Կաթողիկոս Գարեգին Բ-ն՝ ասելով.

Մեծարգո պերական այրեր հայրենի և բարեկամ պետությանը, շնորհագարող հոգևոր եղբայրներ, սիրելի բարերարներ ու բարեկամներ Մայր Աթոռի և հարգարժան ներկաներ.

Հոբելյանական հանդիսություններն ավարտվում են, բաժանման պահն է մտրեմուն։ Մենք ես մեկ անգամ գոհություն ենք մատուցում առ Երկնավոր Բարձրյալը՝ Իր շնորհի համար, որ արժանացրեց մեզ Տիրոջ Սուրբ Սեղանի առջև միասնաբար ստորագրելու բարձրացնելու, հաղորդակցվելու միմյանց, զգալու Հայոց Դարձի Մեծ խորհրդի հոգևորականները ընդգործությունը և գործակալ հոգով։ Մեր ստորագրումն ու մատուցումն է, որ Տիրոջ ողորմությամբ այսպիսի առիթներ հաճախ շնորհվեն մեզ, որպեսզի մշտապես զգանք ու վայելենք միասին լինելու բերկրանքը։

Այդ ու հացով, սիրտ ճաշով եւ կորուստակվում 1700-ամյակին նվիրված սեպտեմբերյան տոնակատարությունները, որ գեղեցիկ մի վկայություն է առ Աստված սիրտ, նվիրումի և գոհարանության։

Այս զգացումներով, հանուն նվիրապետական մեր Աթոռների գահակալների ու կեղեցականների, Մեր ստորագրումն ու բարեմատություններն ենք բերում բոլոր մասնակիցների ու ներկաների։ Մեր գեղատեսիլ բոլոր նրանց, ովքեր ըստ ամենայնի աջակցեցին Մեզ հոբելյանական հանդիսությունների կազմակերպման ու անցկացման աշխատանքներում։ Մեր շնորհակալությունը՝ Հանրապետության նախագահի գլխավորությամբ հայրենի պետության ղեկավար այրերին, ովքեր ամենայն ջանք ի գործ դրին տոնակատարությունների պարզամեծ կազմակերպման համար։ Խորապես զգացված ենք բարեկամ պետությունների պերական այրերի վերաբերմունքից՝ հանդիսություններին բերած իրենց ազնիվ ներկայության և մեր ժողովրդի ու մեր Եկեղեցու հանդեպ դրսևորած հարգանքի համար։ Մեր ողջույնը, սերը և երասխիքի խոսքը բոլոր Եկեղեցիների պերերին ու ներկայացուցիչներին, ովքեր Մեր հրավերին եղբայրաբար ընդառնացին և աղոթական միության մեջ մեր հոգևոր բերկրանքը կիսեցին։

Եղբայրական ջերմ զգացումներով անուն առ անուն ողջունում ենք կրթական սիրեցյալ մեր հոգևոր եղբայրներին՝

ՄԱՍԻՍԻ ԳՐԹԱՅԱԲՈՂԻՍ ԻՐ ՄԱՍԻՍԻՆԻՈՆՆԻՍ ԳՈՒՈՐԾԵՐՆԵՐ





1. ՄՈՍԿՎԱՅԻ ԵՎ ՎԱՄԱՅՆ ՌՈՒՄԻՈ ՊԱՏՐԻԱՐԷ, ՆՈՐԻՆ ՍՐԲՈՒԹՅՈՒՆ ԱԼԵՔՍԻ Բ
2. ՄԱՄԼԱԿԱՐԱՅԻ ՈՒՂՂԱՓԱՌ ԵԿԵՂԵՅՈՒ ԱՌԱՋՆՈՐԴ, ՆՈՐԻՆ ՍՐԲՈՒԹՅՈՒՆ ԲԱՍԻԼԵՈՍ ՄԱՐԹՈՎՄԱ ՄԱՏԹԵՈՍ Բ
3. ԱԼԵՔՍԱՆԴՐԻԱՅԻ ՎՈՒՅՆ ՈՒՂՂԱՓԱՌ ԵԿԵՂԵՅՈՒ ԱՌԱՋՆՈՐԴ, ՆՈՐԻՆ ԱՍԵՆԱՊԱՏՎՈՒԹՅՈՒՆ ՊԵՏՐՈՍ Է
4. ՌՈՒՄԻՆ ՈՒՂՂԱՓԱՌ ԵԿԵՂԵՅՈՒ ՊԱՏՐԻԱՐԷ, ՆՈՐԻՆ ՍՐԲՈՒԹՅՈՒՆ ԹԵՈԿՏԻՍՏ Ա(ՄԵԿՆԵԼ Է)
5. ԶԵՆԹՐԲԵՐԻԻ ԱՐԶԵՊԻՍԿՈՊՈՍ, ԳԵՐԱՇՆՈՐԿ ԶՈՐՋ ԶԵՐԻԻ
6. ՍԻՐԻԱՅԻ ՈՒՂՂԱՓԱՌ ԵԿԵՂԵՅՈՒ ՆԵՐԿԱՅԱՅՈՒՅԻՉ, ԳԵՐԱՇՆՈՐԿ ԶՈՒԼԻԻՈՒՍ ԵՇՈՒ ՉԻՉԵԿ ԵՊԻՍԿՈՊՈՍ
7. ՂՊՏԻ ՈՒՂՂԱՓԱՌ ԵԿԵՂԵՅՈՒ ՆԵՐԿԱՅԱՅՈՒՅԻՉ, ԳԵՐԱՇՆՈՐԿ ԱՆԳԵԼՈՍ ԵՊԻՍԿՈՊՈՍ
8. ՎՐԱՅ ՈՒՂՂԱՓԱՌ ԵԿԵՂԵՅՈՒ ՆԵՐԿԱՅԱՅՈՒՅԻՉ, ԳԵՐԱՇՆՈՐԿ ԴԱՆԻԵԼ ՄԻՏՐՈՊՈԼԻՏ
9. ՍԵՐԲԻԱՅԻ ՈՒՂՂԱՓԱՌ ԵԿԵՂԵՅՈՒ ՆԵՐԿԱՅԱՅՈՒՅԻՉ, ԳԵՐԱՇՆՈՐԿ ՊԱՉՈՄԻԵ ԵՊԻՍԿՈՊՈՍ(ՄԵԿՆԵԼ Է)
10. ԲՈՒԼԳԱՐԻԱՅԻ ՈՒՂՂԱՓԱՌ ԵԿԵՂԵՅՈՒ ՆԵՐԿԱՅԱՅՈՒՅԻՉ ԿԻՐԻԼ ՄԻՏՐՈՊՈԼԻՏ
11. ՎՈՒՆԱՍՏԱՆԻ ՈՒՂՂԱՓԱՌ ԵԿԵՂԵՅՈՒ ՆԵՐԿԱՅԱՅՈՒՅԻՉ, ԳԵՐԱՇՆՈՐԿ ՊԱՆԹԵԼԵՅՄՈՆ ՄԻՏՐՈՊՈԼԻՏ
12. ԱԼԲԱՆԻԱՅԻ ՈՒՂՂԱՓԱՌ ԵԿԵՂԵՅՈՒ ՆԵՐԿԱՅԱՅՈՒՅԻՉ ԴԻՄԻՏՐԻՈՍ ՎՐԴ ՄԻՆԱՏԻՍ
13. ԿԻՊՐՈՍԻ ՈՒՂՂԱՓԱՌ ԵԿԵՂԵՅՈՒ ՆԵՐԿԱՅԱՅՈՒՅԻՉ ՎԱՍԻԼԻՈՒՍ ԵՊԻՍԿՈՊՈՍ
14. ԿԱԹՈԼԻԿ ԵԿԵՂԵՅՈՒ ՆԵՐԿԱՅԱՅՈՒՅԻՉ, ԿԱՐԴԻՆԱԼ ՎԱՍՏԵՐ ՔԱՍՊԵՐ
15. ՎԱՅ ԿԱԹՈՂԻԿԵ ԵԿԵՂԵՅՈՒ ԿԱԹՈՂԻԿՈՍ-ՊԱՏՐԻԱՐԷ, ԳԵՐԱՇՆՈՐԿ ՆԵՐՍԵՍ-ՊԵՏՐՈՍ ԺԹ ԹԱՐՄՈՒՆԻ
16. ՄԽԻԹԱՐՅԱՆ ՄԻԱԲԱՆՈՒԹՅԱՆ ԱՐԲԱՎԱՅՐ, ՎՈԳԵՇՆՈՐԿ ԵՂԻԱ Շ. ՎՐԴ ՔԻԼԱՂԱՅԱՆ
17. ԱՄՆ ԵՊԻՍԿՈՊՈՍԱԿԱՆ ԵԿԵՂԵՅՈՒ ՆԵՐԱԿԱՅԱՅՈՒՅԻՉ ԶՈՆ ԲԱՔԸՍ
18. ԵԿԵՂԵՅԻՆԵՐԻ ՎԱՄԱՇԽԱՐՎԱՅԻՆ ԽՈՐՎՐԴԻ ՆԱԽԱԳԱՎ ԴՈԿՏ. ԿՈՆՐԱԴ ՌԱՅԶԵՐ
19. ԴԱՆԻԱՅԻ ԼՅՈՒԹԵՐԱԿԱՆ ԵԿԵՂԵՅՈՒՅ՝ ԳԵՐԱՇՆՈՐԿ ԷՐԻԿ ՆՈՐՄԱՆ ՍՎԵՆԴՍԸՆ ԵՊԻՍԿՈՊՈՍ
20. ՇՎԵԴԻԱՅԻ ԼՅՈՒԹԵՐԱԿԱՆ ԵԿԵՂԵՅՈՒ ՆԵՐԿԱՅԱՅՈՒՅԻՉ

- ՅԻՉ, ԳԵՐԱՇԵՆՈՐՎ ԶՈՆԱՍ ԶՈՆՍՈՆ ԵՊԻՍԿՈՊՈՍ
21. ԷՍՏՈՆԱԿԱՆ ԵԿԵՂԵՅԻՆԵՐԻ ԽՈՐՎՐԴԻ ՆԵՐԿԱՅԱՅՈՒ ՅԻՉ, ԳԵՐԱՇԵՆՈՐՎ ԷՅՆԱՐ ՍՈՒՌՆՆ
 22. ԳԵՐՄԱՆԻԱՅԻ ԱՎԵՏԱՐԱՆԱԿԱՆ ԵԿԵՂԵՅՈՒ ՆԵՐԿԱՅԱՅՈՒՅԻՉ, ԴՈԿՏ. ՄԱՐՏԻՆ ՏԱՄԿԵ
 23. ՏԱՅ ԱՎԵՏԱՐԱՆԱԿԱՆ ԵԿԵՂԵՅՈՒ ՆԵՐԿԱՅԱՅՈՒՅԻՉ ՌԵՆԵ ԼԵՎՈՆՅԱՆ
 24. ԵՎՐՈՊԱԿԱՆ ԵԿԵՂԵՅԻՆԵՐԻ ԿՈՆՖԵՐԱՆՍԻ ՆԵՐԿԱՅԱՅՈՒՅԻՉ, ՊՐՈՖ. ԿԱՐՍԹԵՆ ՖԼԵԴԵԼԻՌԻՄ

Մեր գնահատանքն ու օրհնությունն ենք հղում 1700-ամյակի կազմակերպման եկեղեցական ու պետական հանձնախմբերի, ինչպես նաև նվիրակարական մեր Աթոռներից ու թեմերից ներս գործող գրասենյակների բարեջան անդամներին՝ իրենց ղեկավարների գլխավորությամբ, ովքեր մեծ հանձնառությամբ աշխարհցին կազմակերպյալ կարգավորել հանդիսությունների ծրագիրը և այն ամենաբարձր մակարդակով իրականացնել:

Բարձր ենք գնահատում հարկապես 1700-ամյակի գրասենյակի վարիչ-բարձրագույն, Գերաշնորհ Տ. Նովան արքեպս. Տերերերյանի խանդավառ, անհոգնաբեկ նվիրումն ու ներդրումը տոնակատարությունների վախճալու կազմակերպման գործում: Գնահատանքով ցանկանում ենք նշել նաև Գերաշնորհ Տ. Մեսրոպ արքեպս. Աշխյանի ջանքերը՝ տարված կազմակերպական աշխատանքներում ունեցած վաստակի համար:

Մայր Եկեղեցու կյանքի հոբելյանական այս տոնակատարությունը արժանապատիվն արևմտյան մեծ մեծ է աշխարհ երջանակահիշարակ Մեր նախորդների՝ Վազգեն Ա և Գարեգին Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսների, ովքեր ցանկանալով ցանկացան և ամենայն ջանք ի գործ կոչեցին 1700-ամյակի տոնակատարությունը հայ ժողովրդի կյանքում մի նոր հոգեգալուստ դարձնելու համար: Մեր հարգանքը, խոնարհումն ու աղոթքն ենք մատուցում հոգեյույն Հայրապետների անսակ հիշարակներին:

Մեր սերն ու շնորհակալությունն ենք քերում նաև Մայր Աթոռի բարերարներին ու բարեկամներին: Մեր եկեղեցիների կյանքում մեծ է դերը ազնիվ անհատների, ովքեր իրենց ազնիվ վաստակը ծառայեցնում են Եկեղեցու պայծառությանը: Գոհություն ենք հայրնում Տիրոջը, որ այդպիսի նվիրյալներով մշտապես շենացնում է Իր Սուրբ Եկեղեցին:

Առանձնակի գնահատանքով ու գոհունակությամբ ենք նշում անունները մեծազնիվ բարերարներ

1. ՏԻԿԻՆ ԼՈՒԻՉ ՄԱՆՈՒԿՅԱՆ-ՍԻՄՈՆ
2. ՏԻԱՐ ՌԻՉԱՐԴ ՄԱՆՈՒԿՅԱՆ
3. ՏԵՐ ԵՎ ՏԻԿԻՆ ՎԱԶԵ ԵՎ ԹԱՄԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆՆԵՐ

4. ՏԵՐ ԵՎ ՏԻԿԻՆ ՆԱԶԱՐ ԵՎ ԱՐՏԵՄԻՍ ՆԱԶԱՐՅԱՆՆԵՐ
5. ՏԵՐ ԵՎ ՏԻԿԻՆ ԳԱՌՆԻԿ ԵՎ ԱՆԻ ՅԱԿՈԲՅԱՆՆԵՐ
6. ՏԵՐ ԵՎ ՏԻԿԻՆ ՍԱՐԳԻՍ ԵՎ ԲՈՐԻ ՎԱԿՈԲՅԱՆՆԵՐ
7. ՏԵՐ ԵՎ ՏԻԿԻՆ ՆՈՐԱՅՐ ԵՎ ԼԻՆԴԱ ԳԵՎՈՐԳՅԱՆՆԵՐ
8. ՏԵՐ ԵՎ ՏԻԿԻՆ ՍԱՐԿ ԵՎ ԱՆԻ ԳԱՐԻԵԼՅԱՆՆԵՐ
9. ՏԻԿԻՆ ՍԻՐԱՆ ԳԱՐԻԵԼՅԱՆ
10. ՏԻԱՐ ԷՂՈՒԱՐԴՈՒՆ ԷՌՆԵԿՅԱՆ

1. «ԳԱՆՈՒՍՏ ԳՅՈՒԼԱԵՆԿՅԱՆ» ՎԻՄԱՂՐԱՍ
2. ԱՄՆ ՎԱՅՈՅ ԱՐԵՎԵԼՅԱՆ ԹԵՄ
3. ԱՄՆ ՎԱՅՈՅ ԱՐԵՎՄՏՅԱՆ ԹԵՄԻ «ԽԱՉԱՏՈՒՐՅԱՆ»
ԴՊՐԱՅ ԴԱՍ
4. Տ. ԳԱՌՆԻԿ ԱՎ. ԶԱՎԱՆԱ ՎԱԼԱԶՅԱՆ
5. ՏԵՐ ԵՎ ՏԻԿԻՆ ԶՈՐԶ ԵՎ ԴԱՅԱՆԱ ՔՅՈՒՐՔՅԱՆՆԵՐ
6. ՏԵՐ ԵՎ ՏԻԿԻՆ ՎԼԱԴԻՄԻՐ ԵՎ ՆԱՏԱՇԱ ՎԱՐՈՒԹՅՈՒՆ-
ՅԱՆՆԵՐ
7. ՏԵՐ ԵՎ ՏԻԿԻՆ ԺԻՐԱՅՐ ԵՎ ԷԼԻԶ ԴԵՐՎԻՅՅԱՆՆԵՐ
8. ՏԵՐ ԵՎ ՏԻԿԻՆ ԱՐՄԵՆ ԵՎ ՍԻՐԱՆՈՒՇ ՄԵԾԱՏՈՒՐՅԱՆ-
ՆԵՐ
9. ՏԵՐ ԵՎ ՏԻԿԻՆ ՍԱՐԳԻՍ ԵՎ ՍԵՂԱ ԴԵՄԻՐՅԱՆՆԵՐ
10. ՏԵՐ ԵՎ ՏԻԿԻՆ ՎԱՎԱՆ ԵՎ ԱՆՈՒՇ ՇԱՄԼՅԱՆՆԵՐ
11. ՏԵՐ ԵՎ ՏԻԿԻՆ ՆՈՒԲԱՐ ԵՎ ԱՆԻՏԱ ԶԵՍՈՒՐՅԱՆՆԵՐ
12. ՏԵՐ ԵՎ ՏԻԿԻՆ ՎԱԿՈԲ ԵՎ ԶԱՏՐԻՆ ԳԱՐԻԵԼՅԱՆՆԵՐ
13. ՏԻԿԻՆ ԶՈՒԼԻԱ ԿՈՐՈՅԱՆ
14. ՏԻԿԻՆ ՏԻՐՈՒՎ /ՏՈՐԻՍ/ ՉԸՆՆՈՋՅԱՆ
15. ՏԻԱՐ ԶԻՎԱՆ ԿՈՐՈՅԱՆ
16. ՏԻԱՐ ԻՇԽԱՆ ՊԻՏԵՃԻ
17. ՏԻԱՐ ԱՐԱ ԱՐԱՎԱՄՅԱՆ
18. ՏԻԱՐ ՎԱԿՈԲ ԶՐՄՋՅԱՆ

Շնորհիվ մեր բարերարների ազնիվ հանձնառության իրականացվել են եկեղեցաշինական, հրապարակչական ու քարոզչական մեծածավալ աշխատանքներ: Այս օրերին մեր ժողովրդին մարտցած մեծագույն ընծան՝ 1700-ամյակի խորհրդանիշը, Երևանի Մայր եկեղեցին, լավագույն արժանիքն է նաև Ձեր նվիրումի: Եկեղեցասեր ու հայրենաշեն իրագործումների այս ոգին է մեր կյանքի կենսատու ալիշը, որ ներշնչել է նաև ԱՄՆ հայոց արևմրության թեմի մի խումբ եկեղեցականներ անձանց՝ հորեյանական այս օրերին զբաղվելու Վայասարանում և իրենց անգին ծառայությունը քերելու Մայր Ա-

թոռին՝ ընդունելությունների ու սիրտ ճաշերի կազմակերպման մեջ: Մեր մասնավոր գնահատականն ու օրհնությունը նրանց՝ Ֆրոյա Դունայանցին, Սոսի Գևորգյանին, Սոսի Զելելյանին, Ներմինն Զանոյանին, Սավի Թոֆեկյանին, Լորեն Մուշեղյանին, Լիդուշ Խաչատրյանին, Զոն Մուրրին, Լիլի Թադևոսյանին, Գուրգեն Դալիրին:

Մեր բարձր գնահատականն ենք հայրնում նաև Մայր Աթոռի բաժնիների անդամներին ու աշխատակիցներին, ովքեր ջանադրությամբ իրականացրին իրենց վարստիված պարտականությունները: Բարձրորեն ենք գնահատում նվիրումն ու ծառայությունը Մայր Եկեղեցու եկեղեցաշինական աշխատանքներում ներգրավված բոլոր անձանց՝ ճարտարապետների, շինարարների ու բանվորների, ովքեր իրենց արդար քրտինքը շաղախ դարձրին Երևանի Մայր եկեղեցուն և այլուր կառուցված եկեղեցական շինություններին:

Մեր երախտագիտությունն ենք վերստին հայրնում Բարձրյալ Տիրոջը, որ շնորհը պարգևեց մեզ միասին լինելու, ճաշակելու միասնության բարի պարտիները և մեր համախմբումի մեջ զգալու հոգեկոտորումի ուժը: Մեր աղոթքն է, որ Տերը հաճապազ Իր հովանին տաքածի աշխարհի ժողովուրդների վրա, օրհնի նրանց խաղաղ ու արեղծագործ ընթացքը և ամենքիդ պարզևի բյուր բարիքներ ու հաջողություններ ձեր առաքելության մեջ՝ հաճուն մարդկության բարօրության ու համեղության:

Քրիստոնեությունը հայաստանում պետական կրոն հռչակման 1700-ամյակին նվիրված եզրափակիչ գլխավոր հանդիսությունները մոպեցան իրենց ավարտին, արարողություններ, որոնք կարարվեցին առանձնակի շուքով՝ հոգեկան մեծ բավականություն պարճառելով մեզ՝ ամենքիս: Անկրկնելի Ս. Տրդատա Բաց խորանը, Ս. Գրիգոր Լուսավորչի հաղթականարը և, հարկապես, Երևանի նորակառույց շքեղաշուք Ս. Գրիգոր Լուսավորչի Մայր եկեղեցին այս բոլորի խոսուն վկաներն են:

Նոբելյանագարդ 2001 թվականը շնորհաբաշխ իր բարերար ազդեցությունը թողեց հայց. Եկեղեցու բարեպաշտ հավաքացյալներիս վրա, մի գորել խթան, մղիչ ուժ հանդիսացավ՝ մեր սեփական էությունը ճանաչելու, անանձնական սիրով կարարելու աստվածահաճո գործեր և արժանանալու Բարձրյալն Աստծո քաղցր բարեհաճությանը:

ԴԱՎԻԹ ՍՐԿ. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ